ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3/5.1-24

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2024թ. մարտի 27-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելված N 2-ի 5.1 կետով նախատեսված **«Միջազգային միջոցառումների կազմակերպում»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ս.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝ Հանձնաժողովի նախագահ
Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ
Ս.Ասլիզադյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ
Ա.Սողբաթյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության գլխավոր մասնագետի պաշտոնակատար
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Լ.Պետրոսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի օրակարգը.

- Ծրագրի հավելված N 2-ի 5.1 կետով նախատեսված «Միջազգային միջոցառումների կազմակերպում» միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով «Բիզնես Ինսայթ» ՍՊԸ-ի հետ կնքվող պայմանագրի ընթացքի վերաբերյալ:

Լսեցին

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրեց, որ

Ծրագրի հավելված N2-ի 5.1 կետով նախատեսված «Միջազգային միջոցառումների կազմակերպում» միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով «Բիզնես Ինսայթ» ՍՊԸ-ի հետ կնքվող պայմանագիրը տեղադրվել է Mulberry համակարգ պայմանագրի նախագծի վերաբերյալ Իրավաբանական և Ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչությունների համաձայնեցման գործընթացն ապահովելու նպատակով:

Այս գործընթացի արդյունքում Իրավաբանական և Ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչությունները ներկայացրել են իրենց առաջարկությունները և դիտողությունները:

Մասնավորապես՝

Ծրագրի հավելված N2-ի 5.1 կետով նախատեսված «Միջազգային միջոցառումների կազմակերպում» միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով «Բիզնես Ինսայթ» ՍՊԸ-ի հետ կնքվող պայմանագրում առաջարկվել է պայմանագրի նախագծի արդյունքային ցուցանիշները համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանով հատատված N2 հավելվածի 5.1 կետով նախատեսված «Միջազգային միջոցառումների կազմակերպում» միջոցառման վերստուգելի չափանիշներին, որով նախատեսվում է՝

«Զբոսաշրջության ոլորտում ընդլայնված և ակտիվացված միջազգային համագործակցություն, այդ թվում՝ առնվազն երկու միջազգային միջոցառման կազմակերպում

Միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպվող միջոցառումներին մասնակցության ապահովում,

Երրկողմ և բազմակողմ իրավապայմանագրային պարտավորությունների կատարում»,

մինչդեռ պայմանագրի նախագծով և «Բիզնես Ինսայթ» ՍՊԸ-ի կողմից ֆինանսական հախահաշվով նախատեսվել է միայն «առնվազն երկու միջազգային միջոցառման կազմակերպում»:

Քննարկեցին՝

1. Ծրագրի հավելված N2-ի 5.1 կետով նախատեսված «Միջազգային միջոցառումների կազմակերպում» միջոցառման «Վերստուգելի չափանիշ» սյունակով նախատեսված երրորդ՝ «**Երրկողմ և բազմակողմ իրավապայմանագրային պարտավորությունների կատարում» միջոցառումը** ենթակա չէ իրականացման «Բիզնես Ինսայթ» ՍՊԸ-ի կողմից և ՀԿ գործունեության մասն է կազմում:

2. Անհրաժեշտ է հետագայում Ծրագրում առավել հստակ տարանջատել ֆինանսավորում նախատեսող և ՀԿ գործունեությանն առնչվող ու ֆինանսավորում չնախատեսող միջոցառումները՝ հակասություններից խուսափելու նպատակով:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. Առաջարկել Ծրագրի հավելված N2-ի 5.1 կետով նախատեսված «Միջազգային միջոցառումների կազմակերպում» միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով «Բիզնես Ինսայթ» ՍՊԸ-ի հետ կնքվող պայմանագրի նախագծի N1, N1.1 և N5 հավելվածներով նախատեսված կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները, ինչպես նաև ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանով հատատված N2 հավելվածի 5.1 կետով նախատեսված «Միջազգային միջոցառումների կազմակերպում» միջոցառման վերստուգելի չափանիշներին՝ նախատեսելով ինչպես «**առնվազն երկու**

միջազգային միջոցառման կազմակերպում», այնպես էլ «**Միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպվող միջոցառումներին մասնակցության ապահովում»՝** միաժամանակ առաջարկելով ընկերությանը ծրագրին համապատասխան վերանայել իրենց կողմից ներկայացված ֆինանսական նախահաշիվը՝ առանց վերջնական գումարի փոփոխության:

2. Ծրագրի հավելված N2-ի 5.1 կետով նախատեսված «Միջազգային միջոցառումների կազմակերպում» միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով «Բիզնես Ինսայթ» ՍՊԸ-ի հետ պայմանագրի կնքման գործընթացը շարունակել վերոնշված փոփոխությունը իրականացնելու դեպքում:

3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ս.Հակոբյան - _____
(հանձնաժողովի նախագահ)

Ա.Մկրտչյան - _____

Ս.Ասլիզադյան - _____

Ա.Սողբաթյան - _____

Հ.Սահակյան - _____

Լ.Պետրոսյան - _____

Շ.Հովսեփյան - _____